ՀՀ արդարադատության նախարարության նոտարների որակավորման ստուգման հանձնաժողով

Արձանագրություն N6

քաղաք Երևան ինը նոյեմբերի երկու հազար տասներկու թվականի

ՀՀ արդարադատության նախարարության նոտարների որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012 թվականի նոյեմբերի 9-ի նիստում ուսումնասիրեց և ամփոփեց նոտարների որակավորման ստուգման գործնական խնդիրների փուլի բողոքարկման արդյունքները:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Ա. Օրբելյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Հովհաննիսյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետ
Դ. Մխեյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նոտարիատի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի պետ
Ա. Աբրահամյան - Կենտրոն նոտարական տարածքի նոտար
Ռ. Սահակյան - Կենտրոն նոտարական տարածքի նոտար

Հանձնաժողովի մյուս 3 անդամները տեղեկացվել են նիստի մասին, բայց նախօրոք ծանուցել էին մասնակցելու անհնարինության մասին և չեն ներկայացել նիստին:
Քվորումն ապահովված էր:
Ներկա էր հանձնաժողովի քարտուղար Լ. Իսկանդարյանը:
Իրենց բողոքների ուսումնասիրության ժամանակ ներկա էին Վարդուհի Սարոյանը և Արմինե Մելքոնյանը:
Ավետիք Պապինյանը ծանուցվել էր նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն չէր ներկայացել և նախօրոք տեղեկացրել էր բացակայելու հնարավորության մասին:

ՕՐԱԿԱՐԳ՝

Նոտարների որակավորման ստուգումների երկրորդ փուլի բողոքների ուսումնասիրում և երկրորդ փուլի վերջնական ամփոփում:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

Օրակարգի առաջին հարցի հետ կապված Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ ստուգումների երկրորդ փուլի արդյունքները բողոքրկել է 3 /երեք/ մասնակից: Որոշվեց ուսումնասիրել բոլոր աշխատանքները՝ սկզբում ուսումնասիրել ներկա գտնվող անձանց աշխատանքները, հետո նաև բացակա դիմորդի աշխատանքը:

Ուսումնասիրվեց **Վարդուհի Սարոյանի** աշխատանքը՝ ներկայացված բողոքի շրջանակներում: Վարդուհի Սարոյանը ներկայացրեց իր հիմնավորումները, ներառյալ մի շարք ենթադրյալ սխալները իրավական այլ հոդվածների (համարժեք հոդվածների վրա) վրա կատարած լինելը: Նաև Վարդուհի Սարոյանը մատնանշեց հաշվարկի մեկ միավոր սխալի վրա, ինչպես նաև երկու ենթադրյալ սխալի վրա, որոնք նա նշել է իր գրավոր աշխատանքում, սակայն հանձանաժովը առաջնային ստուգման ժամանակ չի նկատել և դրա համար իջեցվել են բալեր: Ընդհանուր առմամբ Վարդուհի Սարոյանի պնդմամբ, գնահատակը պետք է բարձրացվի 15 /տասնհինգ/ միավորով և կազմի 85 /ութսունհինգ/:

Հանձնաժողովը քննարկեց ներկայացված հիմնավորումները, ինչպես նաև դրանց հիմնավորվածությունը՝ հաշվի առնելով գնահատման հաստատված չափանիշները:

Ուսումնասիրվեց **Արմինե Մելքոնյանի** աշխատանքը: Արմինե Մելքոնյանը նշեց իր կարծիքով իր կողմից կատարված սխալների քանակները: Արմինե Մելքոնյանը նշեց իր կարծիքով իր կողմից ճիշտ նշված, սակայն հանձնաժողովի կողմից որպես սխալ համարված մի շարք հարցեր: Ըստ դիմորդի, իր աշխատանքը պետք է գնահատվեր իննսուն կամ ավելի բալ: Քննարկման արդյունքում պարզվեց, որ կա որոշակի թյուրընկալում գնահատման համակարգի հետ կապված, և դիմորդին պարզաբանվեց, որ յուրաքանչյուր խնդիր՝ անկախ դրանում առկա սխալների միավորների քանակից գնահատվում է տաս միավոր (չի կարող գնահատվել տասից ավել, կամ բացասական միավոր): Պարզաբանումից հետո դիմորդը բավարարվեց, և հանձնաժողովին դիմեց բալերը սահմանված կարոգով՝ հաշվի առնելով իր բողոքում գրված և նիստի ժամանակ նշված դիրքորոշումը: Ըստ դիմորդի, հաշվի առնելով պարզաբանված գնահատման կարգը, իր աշխատանքի վերջնական գնահատականը պետք է բարձրանա 11 /տասնմեկ/ միավորով և կազմի 70 /յոթանասուն/ միավոր:

Հանձնաժողովը քննարկեց ներկայացված հիմնավորումները, ինչպես նաև դրանց հիմնավորվածությունը՝ հաշվի առնելով գնահատման հաստատված չափանիշները:

Ուսումնասիրվեց **Ավետիք Պապինյանի** բողոքը: Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ Ավետիք Պապինյանը ներկայացրել է բողոք, որում նա մատնանշել է մի շարք ընթացակարգային հարցեր (օրինակ, ըստ դիմորդի *խնդիրներում չի նշվել որ անհրաժեշտ է վավերացման մակագրություն կատարել, իսկ հանձնաժողովի որոշումը, ըստ որի՝ մակագրություն չանելու համար նվազեցվում է տաս միավոր հրապարակվել է միայն վեջրին օրը*), ինչպես նաև խնդրել է վերստուգել իր աշխատանքն ամբողջությամբ: Լուսինե Իսկանդարյանը նշեց, որ հետագայում, երբ Ավետիք Պապինյանը ծանոթացել է Հանձնաժողովի թիվ հինգ արձանագրության հետ, ինչպես նաև նրան պարզաբանվել է, որ նշված մակագրությունները ըստ խնդիրների չէր ենդարդրվում կատարել նա իր 2012 թ. նոյեմբերի 7-ի հավելյալ դիմումով հրաժարվել էր բողոքի՝ ընթացակարգային ենթադրյալ խախտումների հիմքով բողոքից, սակայն հանձնաժողովից հայցել էր վերանայել աշխատանքն ամբողջությամբ և վերահաշվարկել բալերը: Իր դիմումի մեջ դիմորդը նշել էր, որ ակնկալվող միավորը մոտ երկու անգամ պետք է գերազանցի առկա գնահատականը՝ 42 /քառասուներկու/ միավորը:

Հանձնաժողովը ուսումնասիրեց բոլոր հիմքերը, այդ թվում նաև ընթացակարգային խախտումների հնարավորության մասով, նաև կրկին անգամ վերանայվեց Ավետիք Պապինյանի աշխատանքը:

<u>Հանձնաժողովը բողոքները ուսումնասիրելս որոշել էր առաջնորդվել սկզբունքով, համաձայն որի բոլոր տարընկալումները պետք է գնահատվեին ի օգուտ դիմորդների</u>:

Բոլոր բողոքները ուսումնասիրելուց հետո Արամ Օրբելյանը առաջարկեց՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի «Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին» N 789-Ն որոշմամբ (վերախմբագրվել է ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 1463-Ն որոշմամբ) հաստատված կարգի պահանջները, հրապարակել բողոքարքող մասնակիցների վերանայված միավորների ցանկը, ինչպես նաև տեղեկացնել բողոք բերող անձանց բողոքների վերանայման արդյունքերի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Վերանայել Վարդուհի Սարոյանի աշխատանքի գնահատականը, այն բարձրացնելով տասնհինգ միավորով և աշխատանքը գնահատել 85 /ութսունհինգ/ միավոր: Սահմանել, որ Վարդուհի Սարոյանը կարող է մասնակցել նոտարների

թեկնածուների որակավորման ստուգման երրորդ փուլին: Սույն որոշման հետ միաժամանակ ծանուցել նրան երրորդ փուլի անցկացման վայրի և ժամի մասին:

ընդունվեց միաձայն

2. Վերանայել Արմինե Մելքոնյանի աշխատանքի գնահատականը, այն բարձրացնելով 11 /տասնմեկ/ միավորով և աշխատանքը գնահատել 70 /յոթանասուն/ միավոր: Սահմանել, որ Արմինե Մելքոնյանը անկախ բողոքարկման արդյունքում բալերի բարձրացնելուց չի հավաքել բավարար միավորներ երրորդ փուլին մասնակցելու համար:

ընդունվեց միաձայն

3. Վերանայել Ավետիք Պապինյանի աշխատանքի գնահատականը, այն բարձրացնելով 22 /քսաներկու/ միավորով և աշխատանքը գնահատել 64 /վաթսունչորս/ միավոր: Սահմանել, որ Ավետիք Պապինյանը անկախ բողոքարկման արդյունքում բալերի բարձրացնելուց չի հավաքել բավարար միավորներ երրորդ փուլին մասնակցելու համար:

ընդունվեց միաձայն

4. Հաստատել, որ որակավորման ստուգման ընթացքում թույլ չեն տրվել ընթացակարգային կամ այլ սխալներ ու թերություններ, որոնք ազդել են կամ կարող չին ազդել որակավորման ստուգման իրականացման գործընթացի վրա (առնվազն առկա բողոքների և տեղեկատվության ուսումնասիրության արդյունքերով): Ծանուցումները իրականացվել են և որոշումները կայացվել են սահմանված կարգին համապատասխան և սահմանված ժամկետներում:

ընդունվեց միաձայն

5. Հաստատել նոտարների որակավորման ստուգումների խնդիրների փուլի արդյունքները բողոքարկած մասնակիցների ցանկը իրենց վերանայված միավորներով՝ ըստ կից հավելվածի: Հրապարակել սույն արձանագրությունը և բողոքարկման արդյունքների ցուցակը ՀՀ արդարադատության նախարարության www.moj.am պաշտոնական կայքում:

ընդունվեց միաձայն

Արձանագրությունը կազմված է երեք էջից՝ կից Հավելվածով (մեկ էջ):

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. ՕՐԲԵԼՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆՈՏԱՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ	
Անուն, Ազգանուն	**Միավոր**
Մելքոնյան Արմինե	70
Պապինյան Ավետիք	64
Սարոյան Վարդուհի	85